

## ՀՀ Օրենքը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ Օրենքում ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է  
22 հունիսի 2012 թ.

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում, 3-րդ մասում «հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների» բառերը փոխարինել «օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 5-րդ կետի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների» բառերը փոխարինել «օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Ս. Սարգսյան  
30 հունիսի 2012 թ.  
Երևան  
ՀՕ-168-Ն